Ա. Տարի — Թիւ 102 Ուրբաթ, 31 Դեկտեմբեր 1915



ՀԱՏԸ 5 ՄԻԼԻԷՄ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

		Տարեկան	Վեցամսեայ
ԵԳԻՊՏՈՍ	Ղ.Ռ.	80	40
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	Ֆր.	20	10

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐՈՒ ՕՐԳԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Շարա Ապու Տարտար, Թիւ 16
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ՀԱՍՑԷ
Journal AREV
B. P. № 600
Alexandrie, EGYPTE

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ՝ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԱՂԷՏԸ

Բոլոր տեղեկութիւնները համաձայն են ըսելու՝ թէ Կովկասի գաղթականները հոգալու գործին մէջ դրամը չէր որ պակսեցաւ։ Ճիշդ է թէ, ինչպէս ամէն տեղի, Կովկասի մէջ ալ հայ հարուստները մեծ պէտքին հանդէպ ժլատ գըտնուեցան մեծ մասամբ։ Այսուհանդերձ անոնց տուած քիչը աւելցընելով Կովկասի ընդհանրապէս բարեկեցիկ ժողովուրդին բազմաթիւ նուիրատուութիւններուն, Ռուսաստանի հայ գաղութներուն առատաձեռն նպաստին, արտասահմանէն ղրկուած կարեւոր գումարներուն և պետական նշանակելի օգնութեան վրայ, բաւական եղաւ սնուցանելու գաղթականներուն նպաստի գործը, եթէ գաղթականները չսնուցանեց ալ միշտ։ Մենք յաճախ հանդիպեցանք թերթերու մէջ սա՛պէս լուրերու. «Մինչեւ օրս Վեհափառը ստացել է (օրինակ) 650,000 րուբլի, ծախսուել է 500,000 րուբլի» կը նշանակէ թէ Ֆոնդը երբեք չի պակսեցաւ, ինչ որ կը նշանակէ դարձեալ՝ թէ ժողովուրդին մէջ եղբայրսիրութեան, գթութեան զգացումն ալ չպակսեցաւ։

Ուրեմն ի՞նչէ որ ստեղծեց գաղթականներուն աննկարագրելի թշուառութիւնը, անոնց անօթի, մերկ ու անպատսպար թողուիլը օրերով և ամիսներով, հիւանդութիւններն ու համաճարակները, և ասոնց երեսէն՝ մահացութեան անթիւ դէպքերը։

«Կազմակերպող ուժ չկար, կամ եղածը թերի էր» ըսուեցաւ այդ ահեղ հարցումին իբրեւ ամբողջ պատասխան։ Մենք այն ատեն չհասկցանք այս պատասխանին իմաստը։ Չհասկցանք թէ ինչպէ՛ս երբ դրամը կայ, գաղթականներու տարրական պէտքերն իսկ չեն հոգացուիր, շատեր ուտելիք չոր հաց մը իսկ չեն ստանար և ամէնքը բացօդեայ կը գիշերեն՝ ո՛չ թէ մէկ քանի օր կամ մէկ քանի շաբաթ, այլ մէկ քանի ամիս։ Հիմա կ՚սկըսինք հասկնալ։ Ո՛չ. կազմակերպութիւնը թերի չէր, ընդհակառակը կատարեալ էր, կ՚երեւայ, կազմակերպիչներուն տեսակէտէն՝ որ ամէն բանէ առաջ կ՚ուզէր բազմաթիւ երկրորդական ուսուցիչներու և ուրիշ այս կարգի «մտաւորականներու» չաղ ռոճիկով պաշտօններ հայթայթել։

Ուրիշ կերպ ըմբռնելի չէր այս պատահածը, և մենք գոնէ առեղծուածի մը լուծումը գտնելու գոհունակութիւնն ունեցանք կարդալով Կովկասէն վերջերս մեզի հասած տեղեկութիւնները՝ ցոյց տուող թէ գաղթականական նպաստի գործն ալ, քաղաքական - կամաւորական գործին նման, մեծ մասամբ որոշ հոսանքի մը կողմէ կարգադրուած ու կառավարուած է։ Մեր թղթակիցները կ՚ըսեն ինչ որ ռուսահայ թերթերէ ոմանք ալ կը գրեն հիմա։ Կ՚երեւայ թէ, սակայն, այդ տեղեկութիւնները հրատարակելէ առաջ, պէտք էր հրաման առնէինք որոշ հոսանքին այստեղի ներկայացուցիչներէն, որոնք ահա պոռչըտուք մըն է կը հանեն՝ իբրեւ թէ զիրենք անձնապէս ամբաստանած ըլլայինք, մինչ եթէ անկեղծ ըլլային՝ նախ իրենք ալ պիտի մտածէին գաղթականական գործին այս ողբալի վիճակին վրայ, ու յետոյ ցոյց տրուած պատճառին համար գէթ քննութիւն պիտի պահանջէին և այսպէս թէ այնպէս պիտի ուզէին այդ վիճակը դարմանել տալ։

Դէպի այդ դարմանը առնուած քայլ մըն է Տումայի անդամ Մ. Պապաջանեանի ձեռնարկը՝ որու մասին այսօր հետեւեալը կը կարդանք «Մշակ»ի մէջ.

«Երկուշաբթի, նոյեմբեր 16ի երեկոյեան Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդարանում կայացաւ մասնաւոր խորհրդակցութիւն, որին մասնակցում էին քաղաքի հայկական բարեգործական, փախստականներին նպաստող ընկերութիւնների և կազմակերպութիւնների ներկայացուցիչները և Պետ. Դումայի անդամ Մ. Պապաջանեանը, որ յատկապէս պէտք է զեկուցում անէր փախստականների ընդհանուր գործին վերաբերեալ։

«Մ. Պապաջանեանի զեկուցումը վերին աստիճանի ուշագրաւ էր։ Մի շարք փաստաթղթեր, որ նա ներկայացրեց, ցոյց տուին, որ հայ ազգի ներկայացուցիչը Պետ. Դումայում մեծ ջանք և աշխատութիւն է գործ դրել և կարողացել է յատկացնել տալ պետական գանձարանից բաւական խոշոր գումարներ յօգուտ փախստականների։ Մենք մի առանձին յօդուած կը նուիրենք նրա այդ զեկուցման և աշխատութեան։ Առ այժմ կ՚ասենք, որ նա իր եզրակացութեան մէջ այն միտքը յայտնեց, որ փախստականներին օգնող հայկական բոլոր կազմակերպութիւնները՝ Կ. Հ. Բ. Ընկերութիւնը իր Կենտր. Կոմիտէտի հետ, Նպաստ. Ընկերութիւնը, Եղբայրական Օգնութիւնը իր ճիւղերով, Հայ Գիւղատնտ. Ընկերութիւնը, Բագուի, Մոսկվայի, Պետրոգրադի, Նոր-Նախիջեւանի և այլ քաղաքների կոմիտէները պէտք է համախմբուեն, կազմեն մի կուռ միութիւն, իսկ դրա համար անհրաժեշտ է գումարել առաջիկայում բոլոր այդ կազմակերպութիւնների ներկայացուցիչների մի համագումար Թիֆլիսում կամ Պետրոգրադում և ընտրել մի կենտրոնական խորհուրդ։

«Խորհրդակցութիւնը հաւանութիւն տուեց Մ. Պապաջանեանի այս առաջարկին։

«Ապա խորհրդակցութիւնը զբաղուեց հայ գիւղացիութեան՝ իր ներկայ դրութեան մէջ, երբ հացի պակասութիւն է զգացւում, նպաստելու խնդրով։ Բարեգ. Ընկերութեան խորհուրդը առաջարկում էր բոլոր կազմակերպութիւնների կողմից միջնորդել կառավարութեան առաջ՝ բաց թողնելու մի որոշ գումար՝ պաշարելու ալիւր և տալու գիւղացիութեան։ Հ. Գիւղատնտ. և Տնայն. Ընկերութեան ներկայացուցիչը յայտնեց, որ Ընկերութիւնն արդէն վաղուց ձեռնարկել է այդ գործին և որոշ քայլեր ևս արել է, բանակցելով մի քանի ֆինանսական հաստատութիւնների հետ, որոնք յանձն են առել աջակցել։

«Խորհրդակցութիւնը նպատակայարմար գտաւ, որ միջնորդութիւնը կատարուի բոլոր կազմակերպութիւնների կողմից, և ծրագրի մշակումը յանձնուեց կատարելու երեք ընկերութիւններին՝ Հ. Բ. Ընկերութեան, Նպաստամատոյց Ընկերութեան և Հ. Գիւղատնտեսական և Տնայնագ. Ընկերութեան։»

Այս մասին պիտի խօսինք յաջորդով։

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ՕՐԸ ՕՐԻՆ

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆՔ ՄԻԱՆԱՐ…

Ցարդ ոչինչ, բացարձակապէս ոչինչ զօրեց համերաշխ ու միաբան գործունէութիւն մը յառաջ բերելու Եգիպտահայ գաղթականութեան ծոցին մէջ, խեղճ ծոց մը որ իրերատեցութեան օձը միայն տաքցուցած մեծցուցած է սկիզբէն ի վեր…։

Պարապը գացին մեծ ու պզտիկ ազգերուն տուած օրինակները։

Պարապը գացին բոլոր յուզիչ յօդուածներն ու պերճախօս քարոզները որոնք միութեան ու եղբայրութեան գեղեցկութիւնն ու օգտակարութիւնը կը փաստէին թախանձագին…։

Պարապը գացին ազգային բարձրագոյն իշխանութեանց մերթ ընդ մերթ կատարած գաղտնապահ ճիգերը…։

Պարապը գացին բոլոր իղձերն ու յոյսերը չեզոք ըսուած հլու հեզ մեծամասնութեան, որ անյիշատակ ժամանակներէ ի վեր կ՚սպասէ Մեսիայի գալուն, կ՚սպասէ՛ միութեան երազին մարմին առնելուն։

Պարապը գացին բոլոր այն աղեխարշ, արիւնը երակներուն մէջ սառեցնող և արցունքը աչքերէն վազցնող պատմութիւնները որոնք ամիսներէ ի վեր կ՚ըսեն, կը զրուցեն անհնարին կեանքն ու մահը Երկրի Հայութեան, և որոնք ամէնէն ազդեցիկ քարոզն են, ամէնէն աստուածազօր պատգամն ու մեծատառ պատուիրանքը միութեան և եղբայրսիրութեան՝ զոր մեռցուելու վրայ եղող ազգ մը ուղղած արձակած ըլլայ իր սաստ անդ ողջ մնացող բաղդաւոր այլ ծնողուրաց զաւակներուն։

Ի զո՞ւր ողջմտութիւնը և զգացումը միաբերան՝ «Միացէ՛ք, Հայե՛ր» ըսին մեզի։

Մենք հոս, ինչպէս ամէնուրեք յարտասահման, մերժեցինք քինադադար ընել։ Չուզեցինք, չի կրցանք հրաժարիլ մեր տեղական թզուկ ատելութիւններէն ու ոխերէն, ի սէ՛ր — եթէ կարելի է ըսել — այն մեծ Ատելութեան որ կ՚ընծայուէր, որ կը հարկադրուէր մեզի ճակատագրէն, և որ պարտէր համագրաւել, միահեծան տիրակալել մեր սիրտը, ուրիշ ո՛ և է ատելութեան, նոյն իսկ ո՛ և է զգացումի տեղ չի ձգելու համար հոն…։

Ամէնէն անլուծելի առեղծուածը, և ամէնէն ամօթալի իրողութիւնը պիտի մնայ սա բանը թէ՝ 1915 աղէտի Թուականին արտասահմանի մէջ ապրող Հայերը կարողացան իրենց ատելու բովանդակ մարդկային ու գերմարդկային ալ կարողութիւնը չսպառել Հայութեան դահիճին՝ Թուրքին վրայ, և անկէ բաւական մեծկակ մաս մը խնայել, աւելցնել՝ գողնալ աւելի՝ վայն եղբայր եղբօր դէմ գործածելու համար խղճի մտօք, ինչպէս անցեալին մէջ…։

Հայեր կան, ափսո՛ս, որոնք այնքան զբաղած են զիրար ատելու որ՝ ժամանակ չեն գտնար, խեղճե՛րը, կամ կը մոռնան, մտացիրնե՛րը, Թուրքը ատելու…։

Այս «անազորոյն հանելուկը» միտքս կը չարչարէ, ու անպատճառ զայն լուծելու պէտքին մղուած, ու թերեւս ալ ներշնչուած, գիտէք ի՞նչ կը խորհիմ…։

Կ՚ստիպուիմ խորհիլ թէ մենք, հոս, չուզեցինք կամ չի կարողացանք—ինչ որ նոյնն է—միանալ ու եղբայրակցիլ, որովհետեւ… Թշնամին շատ հեռու է, որովհետեւ վտանգը… բացակայ է, և մահը՝ անտեսանելի։ Թշնամին, վտանգը, մահը — մեր անողորմ ու մի՛ ճակատագրին երեք տարբեր անունները — չոքած են Հայութեան գլխուն, այո՛, բայց այստեղի անքոյթ — անզգո՞ւթ ալ — Հայութիւնը չէ՛ անիկա. մենք հոս մեր մորթին վրայ զգացած չունինք սարսափը, ապրած չունինք մահը որ բաժինն են մեր հեռաւոր հայրենակիցներուն…։

Եւ ո՞վ գիտէ թէ մենք անխոստովանելի, կամ չի խոստովանուած գոհունակութիւն մը չենք զգար, խորածածուկ, գաղտնի, գողունի գոհունակութիւնը հաստատելու թէ՝ մենք ազատ և ապահով ենք հոս, թէ ոչ մէկ վտանգ կ՚սպառնայ մեր գոյութեան։ Ա՛հ, ապրելուն գոհունակութիւնը, ուրախութիւնը, մինչ Եւրոպայի և Ասիոյ մէջ, այնքան տեղեր, մեռնելու ցաւն ու սարսափը կայ միայն…։

Լուկրետիոս նկարագրած է հոգեկան երանաւէտ վիճակը մարդուն որ ժայռի մը անսասան ապահովութենէն կը դիտէ նաւու մը ընկղմիլը, մոլեգնած ծովուն հարուածներուն ներքեւ։ Ան կ՚ուրախանայ գաղտնապէս՝ ոչ թէ որովհետեւ նաւ մը կ՚ընկղմի մարդկային կեանքեր տանելով իրեն հետ խաժ անդունդին յատակը, — չէ՛, այնքան անսիրտ չէ, — այլ որովհետեւ ինք, իր սիրական ու նուիրական անձը՝ այդ նաւուն մէջ չէ, այլ ցամաքին վրայ, ողջ, ապահով, անվըթար…։

Ու ինծի կը թուի թէ որպէսզի մենք ալ, հոս, պէտքը, անդիմադրելի պէտքը զգանք քով քովի գալու, արմուկ արմուկի սեղմուելու, մօտեցնելու մեր սիրտերն ու խորհուրդները, որպէսզի եղբայրակցինք ու միաբանինք, մոռնալով մեր անցեալ ու ներկայ բոլոր վէճերն ու քէները և յիշելով ինչ որ պէտք է յաւէտ միացնէ մեզ՝ մեր երակներուն մէջ հոսող միեւնոյն արիւնը և հո՛ն հեռուն ուղխօրէն թափուող արիւնը որ մե՛րն է դարձեալ, որպէսզի, կ՚ըսեմ, այսպիսի հրաշք մը կատարուի, պէտք է որ վտանգը… ծայր տայ նաեւ Եգիպտոսի պայծառ հորիզոնէն ու մահուան ստուերները անոր կապոյտն ալ ծածկեն պահ մը։ Այն ատեն, ա՜հ, այն ատեն…։

Բայց մի՛ դող ելլաք, ո՛վ ի բնէ, կոչումով կամ արհեստով անհամերաշխասէրներ, ո՛վ ազգային անհամերաշխութեան խանդավառ տեսաբանները, կամ առաւել կամ նուազ համոզուած փաստաբանները. մի վրդովի՛ք. վտանգ չի կայ. շնորհիւ Բրիտանական մեծազօր կառավարութեան՝ խաղաղութիւնն ու ապահովութիւնը տիրելով կը տիրեն Նեղոսի լուսաշող ափանց վրայ։ Չէ՛, վտանգ չի կայ… որ Եգիպտոսի ապահովութիւնը խռովուի երբեք ու խանգարուի նոյն հետայն հայկական այն զմայլելի անհամերաշխութիւնը կամ աններդաշնակութիւնը որ տարիներէ ի վեր կը տիրէ ու կը տեւէ մեր գաղութին մէջ, և որուն ա՛լ վարժուեցանք, ինչպէս մարդ կը վարժուի ի վերջոյ ամէնէն խժալուր, ամէնէն դժոխային ժխորին։

Կրնաք «շարունակել», Մաք-Մահոնի խափիէկին պէս. Աֆրիկէն սեւերու երկիր մըն է արդէն, և ինչպէս կ՚ըսէ ծանօթ առածը՝ «սեւին օճառն ի՞նչ ընէ, խեւին խրատն ի՞նչ ընէ…»

Մ. Ս. ԿԻՒՐՃԵԱՆ

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԻ

«ՀԱՅԿ. ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՌՈՒԻՆ ՀԱՄԱՐ»

ԺԱ. ՑԱՆԿ

	Եգիպտ. Ղրուշ
Նախորդ ցանկին գումարը	6934.5
Յ. Գափամճեան (4 երրկ.ան)	24
Ոմն	20
Հրանտ Տիլկեան (դեկտ.ի ամսկն.)	20
Գէորգ Նարդեան (Բէնի Սուէֆ)	500
Օմեգօ	400
Լ. Մկրտիչեան (դեկտ.ի ամսկն.)	500
Համագումար՝	8398.5

Ստացանք Առաջնորդ Ս. Հօր հետեւեալ նամակը.

«Ազգ. Գոյութեան Կռուին համար» անուանեալ պաշտ. հայաթերթիդ մէջ բացած ձեր հանգանակութեան հետզհետէ գանձելի ապագայ մասնաւորները կրնա՞ք արդեօք փոխանցել «Նպաստամատոյց»ի անունով մեր կատարած հանգանակութեան։

Վստահ եմ թէ ձեր ազնիւ նուիրատուները դժգոհ պիտի չմնան այսպիսի կարգադրութենէ մը, նկատելով որ ձեր ձեռնարկած հանգանակութեան եւ մեր կատարածին նպատակը նոյնն է արդէն։

Այս կերպով, «Արեւ» իր թանկագին աջակցութիւնը եւս նուիրած պիտի ըլլայ «Նպաստամատոյց»ի ձեռնարկին, որուն համար կանխելով մեր սրտագին շնորհակալութիւնը պաշտ. խմբագրութեանդ եւ յարգելի նուիրատուաց.

Մնամ, սիրոյ ողջունիւ, աղօթարար
Ա. Հ. Ն. ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿ.

Համակերպելով սոյն փափաքին՝ ներկայ ցուցակով կը փակենք «Արեւ»ի հանգանակութիւնը, որու մնացորդ 3398.5 ղրշ.ի գումարը մօտերս կը ղրկենք Վըսեմ. Պօղոս փաշա Նուպարի. իսկ Առաջն. Ս. Հօր թելադրութիւնը կը ներկայացընենք մեր հանգանակութեան ամսականաւոր նուիրատուներուն՝ որոնք կը յուսանք թէ սիրով պիտի ընդունին զայն։

Կը փնտռուի Շուքրի Վարդապետեան, Մարաշցի, որ տարիէ մը ի վեր անյայտ է. գիտցողը թող հաճի իմաց տալ Տիար Յ. Նազարէթեանի գրասենեակը՝ Ենովք Սիբուլաճեանի։ 3

ԻԳԴԻՐԷՆ ՎԱՆ

Վան, 1 Նոյեմբեր

Մեր կառաւորական-երկրապահ խումբը հոկտ. 20ին ճամբայ կ'ելնէ Իգդիրէն։ Արդէն վերադարձող փախստականներու անծայր կարաւան մը բռնած է ճամբան, Իգդիրէ մինչև Վան։ Մեծ մասը գիւղացիներ են, որ կը փութան վերադառնալ իրենց աւերակ երկիրը։ Ի զուր կ'անցնի ամէն խօսք, ամէն համոզում, ի զուր ամէն կարգի աննպաստ լուրեր կը պատմուին Բերկրիի ճանապարհի մասին․ կարաւանը կը շարժի առանց կանգ առնելու։ Հօկանմբերի ցուրտ հովերը կը փչէին Սօղուք-Սուի և Արաղայի սարերու ձիւնապատ կատարներէն, և հիւծուած, մերկ փախստականները կը սառին բաց երկնքի տակ, անպատսպար։

Դաշտերը ամայի են և գիւղերը անբնակ։ Արաղայի դաշտերու մէջէն կը լսուի միայն կատղած շուներու ոռնոցը, որ տխրագին կը հնչէ գիշեր ու ցերեկ անագին դաշտավայրին լռութեան մէջ։ Ցուրտ, սով և Քիւրդեր — ահա վերադարձողներու ճամբուն վրայ սպասող Թշնամիները։ Վերջինները դեռ վերջ չեն տուած իրենց չահատակութիւններուն, ուր որ առիթ գտնեն՝ կը կողոպտեն և կը սպաննեն։ Երեք հոգի Կարաբուլաղի մօտ և երկու հոգի Կըզըլ-Դիզէի ճամբուն վրայ մեռած գտանք։ Բերկրիի ձորին մէջ ալ գիւղացի երկու կարճ երիտասարդներ Քիւրդերէ յարձակում կրելով սպաննուած էին։ Դեաւրէ-չամիի սև ժայռերուն մէջ ապաստանած քանի մը Քիւրդեր, մեզմէ քանի մը օր առաջ, տասնոց ատրճանակով մը միայն զինուած Վանեցի երիտասարդի մը վրայ յարձակելով, բաւական կուելէ վերջ յաջողած էին իր սայլին լծած չորս եզները փախցնել։ Քիւրդերու գնդակներէն հայ աղջիկ մը սպաննուած էր։

Բոլորս ալ յուզուած էինք ժողովուրդի անսահման տառապանքը տեսնելով։ Մեր խումբը իր վրայ կ'առնէ վերադարձող ժողովուրդը ցուրտէն, անօթութեան և Քիւրդերու դէմ պաշտպանելու գործը։ Ընկերներէն ոմանք կ'ըզբաղին անօթութենէ չարժելու անկարող եղողներուն հաց և տաք կերակուր տալու, ուրիշներ ժողովուրդէն առաջ կ'անցնին՝ Քիւրդերու յարձակումներն արգիլելու համար, միևնոյն նպատակով՝ խումբ մը ժողովուրդին Թիկունքը կը պաշտպանէ․ ուրիշներ ճամբու երկայնքին յարմար դիրքեր կը գրաւեն, և անոնց պաշտպանութեան տակ ժողովուրդը ապահովութեամբ կ'անցնի։ Մեր՝ Բերկրին անցնելէն քանի մը ժամ վերջ, հոն մնացած մի քանի ընտանիքներ նոյն գիւղին մէջ յարձակում կը կրեն Քիւրդերէ, բայց բարեբաղդաբար կը յաջողին ազատիլ առանց անձի կորուստ ունենալու։

Բերկրիէն մինչև Թիմար, ճամբան ծածկուած է մորթուած գիւղացիներու դիակներով։ Ասոնք նախորդ նահանջի զոհերն են, որ Բերկրիի ժամանակաւոր գրաւումին անտեղեակ՝ շարունակած են գալ և անխնայ կոտորուած են։ Ինկած են անոնք և իրենց պաղ հայեացքը կը նայի՝ շարունակ դէպ ի երկինք՝ գութ, պաշտպանութիւն աղերսելու, բայց ի զուր․․․

Ճամբան գէմերնիս կ'ելլեն հայ Թալանջիներ, որ Վանի մէջ Հայերու տուներէ կողոպտուած ապրանքներ կովկաս կը փոխադրեն։ Ապրանքները վար կը դըրուին, իսկ յայտնի Թալանջիներէն մի քանիներ շրջանապետ Գ. Տէգմէնի հրամանով Վան կը վերադարձուին հսկողութեան տակ։

Վանի մէջ լսեցինք, թէ լուր է տարածուած այդտեղ, որ իբր թէ մեր վրայ յարձակում տեղի ունեցած է, կոտորուողներ եղած են ևլն։ Բոլորովին սուտ է այդ․ մեր վրայ ոչ մէկ յարձակում չէ եղած։ (Մշակ) ԹՂԹԱԿԻՑ

ԱՆԳԼԻԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

(Ճառ. Մր. Օ'Քոնորի ճառէն)

Այս մեծ պայքարի միջոցին՝ հզօր ազգ մը կայ՝ որ կարկառուն կերպով մեր աչքին կը զարնէ և որ իր քաղաքացիներուն նկարագրովը և իր մարդասիրական ներուժ ոգիովը կարող է զբաղուիլ այս խնդրով և ազատել ողջ մնացողներուն մէկ մասը, և այդ երկիրն է Ամերիկայի Միացեալ Նահանգները։ Կրնամ յորդորել ազնուական լորտը դիմելու այդ մեծ ազգին կառավարութեանը՝ հիմնուելով այն իրողութեան վրայ որ այս կոտորածները Ամերիկայի մէջ առաջ բերին սարսափի պոռթկում մը և դէպի Հայերը այնպիսի մեծ համակրութիւն մը որպիսին երբեք ցոյց տրուած ըլլայ ոև է տառապող կամ ճնշուած ժողովուրդի մը՝ աշխարհի պատմութեան մէջ։ Թղթակցութեան մէջ եմ վերջերս կազմուած Ամերիկեան Քոմիթէին մէկ քանի անդամներուն հետ, և անոնք միջանկեալ կերպով կ'ըսեն թէ՝ Զուիցերիոյ մէջ ալ —ուրիշ չէզոք երկիր մը— զօրաւոր կարծիք մը կայ թէ ազնուական լորտը՝ այս սարսափներուն վերջ մը դնելու փորձին մէջ՝ կրնայ դիմում ընել չէզոք երկիրներու համակրութեանը և աջակցութեանը։ Զուիցերիացի բազմաթիւ ականաւոր և զարգացած անձերու հանդիպեցայ, որոնցմէ ոմանք նոյն իսկ Հայաստան մեկնեցան՝ այս ցեղին մնացորդներուն համար աշխատութիւն և որբանոցներ կազմակերպելու նպատակով։ Բազմաթիւ քստմնելի և սրտառուչ պատմութիւններ իմացանք այս սարսափներուն և գազանութիւններուն մասին՝ այնպիսիներէ որոնք իրենց աչքով տեսած են այս կոտորածները։ Հայաստանի այս կոտորածներուն վերաբերեալ մեր ստացած տեղեկութիւններէն ոմանք Գերմանացի քոյրերու վկայութիւններն են։ Ազնուական լորտին կրնամ ուրիշ կտոր մ'ալ ցոյց տալ այս մասին զօրաւոր կոչում մ'ընելու։ Մենք փորձեցինք բան մը ընել Հայաստանի մէջ։

Բազմաթիւ բարի Անգլիացիներ, որոնցմէ շատերը. Հայաստանի Բարեկամներու ընկերութեան անդամներ, ճգնաժամի օրերուն մէջ Հայաստանի ժողովուրդին ահագին բարիքներ ըրին. բայց այն ազգը որ Հայաստանի համար ամենէն աւելին ըրած է՝ Ամերիկան է։ Մերձաւոր Արեւելք, Եգիպտոս և Հայաստան ճամբորդող ոև է մէկը կրնայ գիտնալ թէ այնտեղ ամենէն բարերար հաստատութիւնները եղած են ամերիկեան միսիոնարութիւնները։ Անոնք գլխաւորապէս, կարծեմ նոյն իսկ ամբողջութեամբ, կը պատկանին բողոքական յարանուանութեանց, սակայն բոլորովին անխտրական ոգիով կը վարուին։ Անշուշտ ինքզինք տառապեալներուն ի սպաս դնող ոև է մէկու մը կրօնական հաւատալիքը վէճի նիւթ չկրնար ըլլալ. հետեւաբար, այս միսիոնարութիւնները ինծի նոյնչափ համակրելի են որչափ եթէ Հռովմէական եկեղեցւոյ պատկանէին։ Ասոնք Հայերու մէջ կարծեմ առնուազն յիսուն հաստատութիւններ ունէին՝ կրթական, քրիստոնէական և բարոյական, և հրաշալի արդիւնքներ առաջ կը բերէին։ Կը յուսամ թէ Խորհրդարանը չեմ ձանձրացըներ, եթէ փոքրիկ հատուած մը կարդամ։ Այս հատուածը կը քաղեմ մէկ բանինոց գրքոյկէ մը որուն վերնագիրն է «ՀԱՅԿԱԿԱՆ ԽԺԴԺՈՒԹԻՒՆՆԵՐ — Ազգի մը սպաննութիւնը»*)։ Կը կարծեմ թէ Խորհրդարանի ամէն մէկ անդամը այս գրքոյկէն հատ մը առած է։ Ջերմապէս կը խնդրեմ որ կարդաք այս գիրքը, տարածէք այս գիրքը, զի անիկա մին է ամենէն սարսռազդեցիկ և պերճախօս կոչերէն որ երբեք գրուած ըլլան։ Կ'ուզեմ, ազնուական լորտին ձեռքերը զօրացնելու համար, պաշտօնական կանոններու սահմանին մէջ՝ օրինակով մը համեմատութեան դնել ամերիկեան միսիոնարութեան գործը Թուրք կառավարութեան գործին հետ։ Հոս ի մէջ կը բերեմ Հայաստանի մէջ՝ ամերիկեան քոլէճի մը նախագահին խօսքերը․ այս նախագահը՝ խօսելով կոտորածներուն մասին՝ այդ քոլէճի ուսանողներուն և ուսուցչապետներուն մէկ ցանկը կը ներկայացնէ։ Ազնուական լորտը գրքոյկը իր առջեւն ունի․ 100երորդ երեսին վրայ է․ լսեցէ՛ք։

«ԱՇԱԿԵՐՏՈՒԹԻՒՆ. աշակերտուհիներեն մօտաւորապէս երկու երրորդը եւ աշակերտներեն վեց-եօթներորդը բանի տարուեցան մահուան, աքսորի եւ մահմեդական տուներու մէջ: ՈՒՍՈՒՑՉՈՒԹԻՒՆ. չորսը տարուած, երեքը կը մնան՝ հետեւեալ կերպով:»

Կ'ուզեմ մէկ քանի բառ ըսել այս ուսուցչապետներէն մէկ երկուքին վրայ։ Բրոֆէսոր Գ., որ Քոլէճին ծառայած է 33 տարի, իր ուսումը առած է Անն Արպօրի մէջ որ Միացեալ Նահանգաց մեծագոյն կրթական հաստատութիւններէն մին է։ Անիկա չափական գիտութեանց ուսուցիչ էր։ Բրոֆէսորներէն մէկ ուրիշը ուսած էր Բրինսթընի մէջ՝ Միացեալ Նահանգաց մէկ ուրիշ համալսարանը։ Ուրիշ բրոֆէսոր մը ուսած էր Լտինպուրկ․ անիկա ալ ուսուցիչ էր մտաւոր և բարոյական փիլիսոփայութեան։ Այս ուսուցիչը չարչարանքի ենթարկուեցաւ․ երեք մատերուն եղունգները արմատէն խլուեցան, և կտտրածի մը միջոցին սպաննուեցաւ։ Անմենք Բրօֆ. Կ.ի պարագան։ Անիկա մօտաւորապէս 15 տարի ծառայեց Քոլէճին։ Իր ուսումը առած էր Քորնէլի և Եէյլի համալսարաններուն մէջ, և ուսուցիչ էր կենսաբանութեան։ Այս Քոլէճին ուսուցիչները, որոնց նախագահը Միացեալ Նահանգաց քաղաքացի էր, իրենց ուսումը առած էին աշխարհի մեծ համալսարաններուն մէջ և մասնաւորապէս Միացեալ Նահանգաց համալսարաններուն մէջ, և ասոնք են որ կոտորուեցան, չարչարուեցան կամ հալածուեցան։ Ահա՛ երկու պատկերներ տարնթերցուած. ամերիկեան միսիոնարութեան ազնիւ գործը և Թուրք վարչութեան նողկալի ու գիւային գործը։ Իմ կարծիքովս, ներկայիս՝ Միացեալ Նահանգաց կառավարութենէն զատ չկայ ուրիշ կառավարութիւն մը՝ որ կարենայ այնքան զօրաւոր ազդեցութիւն մը ի գործ դնել այս մահաշչուկ և սոսկալի խնդրոյն վրայ։ Վստահ չեմ թէ՝ դիւանագիտական կանոններու համաձայն՝ մեր երկրին արտաքին գործոց նախարարութիւնը կարո՞ղ է ուղղակի աղաչարարութիւն մը ընել Միացեալ Նահանգաց կառավարութեան նախագահին, բայց գիտեմ թէ ազնուական լորտը և մենք կըրնանք հոս այս իրիկուն վստահաբար կոչ մ ընել Միացեալ Նահանգաց վեհանձն և մարդասէր ժողովուրդին համակրութեանը և ձեռնտուութեանը՝ այս տարաբաղդ և ճնշեալ ժողովուրդին օգնութիւն հասցնելու համար։

(Շարունակելի)

(*) Այս գրքոյկէն քաղուածքներ ներկայացուցած ենք արդէն մեր ընթերցողներուն «Արեւ»ի 93րդ թիւին մէջ:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՃԱԿԱՏԻՆ ՎՐԱՅ

Բեթրոկրատ, 15.— «Նովոյէ Վրէմիա» կովկասեան ճակատին վրայ տիրող կացութիւնը քննելով կը հաստատէ թէ այս վերջին երկու ամիսներու ընթացքին առաջապահներու կռիւներ մղուած են անդադար։ Կարգ մը շրջաններու մէջ մերթ ընդ մերթ կարեւոր ճակատամարտներ տեղի ունեցած են։ Մանազկերտ-Բիլիսի գործողութենէն վերջ, որ կատարելապէս ձախողեցաւ, Թրքական բանակը լիովին պարտուելով ընդարձակ գործողութիւններէ հրաժարեցաւ և բաւականացաւ պզտիկ ջոկատներով յարձակողականներ ընելով և ասիկա ուտելիքի և ռազմամթերքի շարունակական չգոյութեան պատճառաւ։ Կովկասեան ճակատին ամենակարեւոր եղելութիւնները հետեւեալներն եղան։ Ծովեզերեայ շրջանին մէջ երկու վերջին ամիսներու ընթացքին Թուրքերը խիստ կարեւոր ուժերով երեք անգամ յարձակում գործեցին, բայց նոյն իսկ չի կարողացան Արխաւի աջ եզերքը անցնիլ և ամէն անգամուն ետ մղուեցան ծանր կո-

ՀԱՅԱՐԱՄԵԱՅ ԿՌԻՒԸ (2

Թուրքը՝ միահեծան, տիրող, վարողն էր․ Հայը՝ անպայման ենթարկեալը։ Բայց՝ նոյն իսկ այդ հանգամանքներում, Հայի չուրջը դարձեալ բոլորւում էր մշտական կասկածը, ատելութեան վառ կայծը։

Թուրքը համոզուած էր, որ Հայը զսպուած, հարկադրուած էր իր փոխ-յարաբերութիւնների մէջ․ ազատ կամքը, անկաշկանդ ուղեղը չէր գործ դը․ ինք՝ նաքերաբար՝ ոչինչ․ Նրա անդրդուելի հաւատքն էր, որ Հայը՝ յաջող րոպէին՝ հարուածը պիտի տար։ Ուստի պատմական խէթը, Թոյնը շարունակում էր ներգործել։

Թուրքի փնտռածը Հայի Ֆիզիքական հպատակութիւնը չէր․ դա կար արդէն․ այլ Նրա հոգեկանը․ այդ էր գլխաւորապէս Նրա ուզածը, և ահա դա էլ նրանից չէր կարողանում ստանալ, ձեռք բերել, հակառակ իր Թափած պատմական բոլոր ջանքերին։ Ուստի և՝ անհասելիութիւնը մնում էր իր նախկին կռուանի վրան, նո՛յն բոցավառութեամբ, նո՛յն սաստկութեամբ։ Եւ դա կոչւում էր փոխ յարաբերութիւնների մէջ «եաԹաղան»ի, «գեավուր»ի, «ռայեայ»ի, «բնաջնջում»ի տեսու Թիւն։

Պատմութեան այս երկար տեւողութեան ընթացքում, որ վեց հարիւրից մինչև հազար տարուայ հնութիւն ունի, երբ Հայ Ազգը մարդկային դիւական մաքի ծնունդ եղող անլուր հալածանքների, տանջանքների ենթարկուեց, երբ օսմանեան իրաւակարգի մասը կազմող բնաջնջման՝ կամայական օրէնքները առնմնայն ազատութեամբ գործեցին, զարհուր չարունակ, երբ պատմական ազգերի մէջ ամենաբացառիկ իրողութիւնների առաջ դրուեց, — միթէ՞ նա վերջնականապէս հաշտուեց իրեն համար ստեղծուած վիճակի հետ․ միթէ՞ նա ձեռքերը - ոտքերը կապուած անձնատուր եղաւ, անկանգնելի պարտութեան, ընդմիշտ զինաթափուելի սկզբունքն՝ ընդունեց իր բնաւոր հանդէպ․ — բնա՛ւ երբեք։ Հայն էլ մընաց անհաշտ ատելութեան ներքին վառ կրակով, միշտ ա՛յն յոյսով․ ա՛յն հաւատքով, որ մի օր իր ոսոխին պիտի տապալէր, նրան իր ոտքերի տակը փռէր և նրա ցանցերից ազատուէր։ Թէև տկար, տիրապետուող, գործիք,«ռայեայ», մարդկային, ազգային տարրական իրաւունքներից զուրկ, այդ եղակի կացութեան համբերելով հանդերձ, հարկադրուածի, բռնադատուածի հոգեբանութեամբ զինուած, Հայը դարձաւ մնաց անհատ, միւս անհատ: Իրաւ է, նա սորվեցաւ, գըլուխ ծռեց, տիրապետող Թրքական, ԹաԹարական հրոսակապետական իշխանութիւններին տուեց իր Ֆիզիքականը, ինչքը, գոյքը, աշխատանքի արդիւնքը․ բայց իր հոգին, իր միտքը, իր սիրտը երբե՛ք, ո՛չ մի ժամանակ։ Հայն էլ, մինչև վերջ, Թուրքին, նրա խոստումին, կեղծաւորութեանը, չողոքորթութեանը, ժամանակաւոր մեղմացումներին չը հաւատաց․ իր փոխադարձ յարաբերութեանց մէջ նա՛ էլ մնաց միշտ կասկածոտ, միշտ վարանոտ, քէնն ու ատելութիւնը միշտ սրտին։ ԹաԹարական ցեղերը, թէ՛ իրենց փառայեղութեան և թէ՛ անկման օրերի մէջ, Հայի կողմից նկատուեցին «պիղծ», «անօրէն», «տոոր», «անսանձ կերպ», «չնակեաց»։ Հայը, միշտ և ամէն ժամանակ, իրեն բարձր համարեց իր տիրողներից, իր կոտորողներից։

Ընդհանուր պատմութեան մէջ՝ այդպիսի փոխ-յարաբերութիւններ, այդպիսի սուր և երբեք չփթացող անհաշտելիութիւններ շատ քիչ են պատահած․ գըրեթէ աննախընթաց են նորագոյն շըրջաններում՝ ուրիշ ժողովուրդների, ուրիշ ազգերի միջև։

Իրաւ է, իրարու հետ բաղխուող ուրիշ ազգեր, ուրիշ ժողովուրդներ էլ են եղել, որոնք մին միւսին անխնայ հալածել, քանդել, կործանել են աշխատել․ բայց մի անգամ, երբ պատմութիւնը իր արդիւնքը մէջտեղ է դրել, մի անգամ, երբ մէկը տիրող՝ միւսը տիրուող է հանդիսացել, մէկը յաղթողի՝ միւսը յաղթուողի դրութեան մէջ է ընկել, որոշեալ շրջաններից յետոյ նրանց սկզբնական ատելութիւնները բթացել, իրենց սուր բնաւորութիւնը կորցրել են և ազգութիւնը գլուխ է բարձրացրել։ Նրանք ըստեղծել են հանրական կապեր, իրարու օգակող պայմաններ․ քով քովի ապրել են որպէս հարեւաններ, եթէ ոչ որպէս միացած բարեկամներ՝ գէթ ո՛չ որպէս անհաշտ Թշնամիներ, յաւիտենականապէս իրարու խորթ, անվերջ կերպով ատող, արհամարհող տարրեր։

Հունգարական, գերմանական, սլաւոնական, լատինական զանազան ցեղերը և ազգերը, որքան որ իրարու արիւն են Թափել, այնու ամենայնիւ, նրանք կարող են եղած, մի յայտնի ժամանակաշրջանից յետոյ, ընդհանրական կապեր ստեղծել, իրարու հետ մասամբ հաշտուել ո՛չ միայն պետական, ընկերական, տընտեսական, այլ բարոյական հողի վրայ։

Ինչո՞ւ այդ տարբերութիւնը։

Պատմական այդ խոշոր երեւոյթը, ահա՛, իր խորին արմատները, իր մասնայատուկ պատճառներն ունի։

Հայ ազգ և Տուրանա-Թրքական ցեղեր․ — դրանք պատահականութիւններ, մարդկային տեսլ, անկերպարան զանգուածներ, խառնիճաղանճութիւններ չէին, այլ իրարու հակադիր, դարերի մշուշի մէջ Թաղուած՝ արդէն ձեւաւորուած, ուրոյն կերպաւորում, գոյն, անվերածելի բնաւորութիւն ստացող երկու տարբեր մշակոյթներ, կուլտուրաներ ներկայացնող՝ պատմական անհատականութիւններ:

Հայը և Թուրքը՝ երկու զանազան, իրարու ջնջող, իրարու վանող գաղափարներ, հոգեկան աշխարհներ անձնաւորող մեծութիւններ, արժէքներ էին։

Երբ ասում է՝ թէ Հայը և թէ Թուրքը յարաբերութեան մէջ մտան, այդ ասել է՝ թէ դէմ դիմաց եկան, մէկմէկու բաղխել սկսան երկու հակառակ կուլտուրաներ, մշակոյթներ, պատմութեան արդիւնք եղող՝ երկու տարբեր, հոգեկան, մտաւորական հոսանքներ, ստեղծագործութիւններ։

Նրանք պիտի կռուէին, հակամարտութեան մէջ պիտի մնէին, որովհետև իրարու վանող զօրութիւնների, անտեղիտալի դրութիւնների մարմնացումներ էին։ Նրանից կա՛մ մէկը պիտի լինէր, կամ միւսը։ Երկուսը միասին լինել չէին կարող։

Երկու ցեղերը, երկու ազգերը կըռւում, մարտնչում էին, բայց, իսկապէս, իսկական մարտնչողը նրանց իւրաքանչիւրի կուլտուրան, մշակոյթն էր։

Առաջինը քաղաքական կազմն էր․ ներքինը՝ կուլտուրան․ սա էր ազգի անձնաւորող էութիւնը, հոգին, կենդանութեան կայծը հրահրող շունչը, երկարատև կեանքի, ստեղծագործող ուժերի արդիւնարարը։

Պատմական այդ մեծ պայքարամարտի ընթացքում՝ հզօրը կարողանում էր, երբեմն, մի կողմի մէկ կամ մի քանի ներունդներին նուաճապէս, Ֆիզիքապէս, տնտեսապէս տիրել, նուաճել, իր հարկադրական օրէնքների ցանցերի մէջ առնել․ բայց ինչ էլ որ լինէր, տիրուողի, նուաճուողի հոգին, կուլտուրան մնում էր աննուաճ, անառիկ, չտիրապետուած։ Եւ դարեւոր կռիւը դարձեալ շարունակւում էր՝ երբեմն խաղաղ, երբեմն էլ ժայթքող, բոցավառուող, յորձանուտ ձեւերով, սակայն միշտ միօրինակ, միշտ անկայծող։ Ալիքը, կոհակը անպակաս էր այդ կեանքի մէջ։

Սլաւոնական, գերմանական, հունգարական, լատինական ցեղերի և ազգերի միջև եղած մշակութական, կուլտուրական հակամարտութիւնները իրենց մէջ ո՛չ անհաշտելիութեան սաղմեր, ո՛չ էլ անվերածելի բնաւորութիւն ունէին։ Արմատապէս վանողական, իրարու տրամագծօրէն ջնջող զօրութիւններ չէին նրանք․ այլ ընդհանուր մի արմատի ինքնայատուկ ճիւղաւորումներ, մի գըլխաւոր գոյնի տարբեր երանգաւորումներ։

Մինչդեռ Հայինը և Տուրանականինը այդ տեսակէտից չէր։ Այստեղ երանգաւորումներ չէին իրարու ընդհարուողները, այլ երկու հակոտնեայ էութիւններ, ուր մէկի գոյութիւնը միւսի անկումին էր պայմանաւորուած։ Մէկ միջավայրում երկու տարբեր միջավայրեր լինել չէին կարող․ մէկն ու մէկը պատմութեան Թատերաբեմից վայր պիտի իջնէր և մշտապէս տեղի տար․ որովհետև երկու անվերածելի էութիւններ էին դէմ դիմաց կանգնել։

Ս. ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

բուստներով․ Օլթիի ուղղութեամբ՝ Թուրքերը հինգ անգամ յարձակողականի սկսան նոյմ. 26ին և 27ին, և մեզի դէմ վրայէ վրայ յարձակումներ գործեցին, բայց ետ մղուեցան խիստ կարեւոր վնասներով։ Ալաշկերտի հովիտին մէջ՝ թշնամւոյն յարձակողականը նոյնպէս բուռն եղաւ։ Գըլխաւորաբար նոյ. 28ին Թուրքերը Տութակի արեւմտ. կողմը մեծ կռիւ մը մղեցին, մեր ճակատը ճեղքելու դիտաւորութեամբ, բայց ձախողեցան մեզի թողլով, մեր հակայարձակումներէն յետոյ, իրենց կազմակերպեալ դիրքերուն մէկ մասը։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՅՈՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ԿՈՂՈՊՈՒՏ՝ ՑԱՄՐ ՄԱՀԱՑՈՒՄԸ ԱՌԱՋ

Լորտ Պրայս «Թայմզ»ին կը հաղորդէ Հայոց կոտորածներու և տարագրութեանց մասին նոր մանրամասնութիւններ զորոնք ստացած է ամերիկեան վստահելի աղբիւրներէ, և կը յաւելու թէ հեղինակաւոր անձ մը Հայերու կորուստներուն թիւը մէկ միլիոնի կը հանէ։

Նամակագիր մը կ'ըսէ.

«Տարագրուողները այն աստիճան սարսափ կ'զգան իմանալով «աւելի անդին տեղի ունեցածները—կողոպուտ, ըսպաննութիւն, բռնաբարութիւն, առեւանգում, անօթութիւն—, որ միշտ պատրաստ են իրենց ճամբուն վրայ մէկ քանի օրուան դադար մը ծախու առնել, եթէ դրամ ունին։ Եւ որովհետեւ պատրաստ վակոններ կամ կառախումբեր կը պակսին, ոստիկանները՝ երբ դրամի երեսը տեսնեն, առանց դժուարութեան կը թոյլատրեն վրանները նախորդ օրուան դիրքէն 20 ոտք անդին նորէն զետեղելու։ Խնայել չկայ ո՛չ հիւանդին, ո՛չ ծերին, և ո՛չ մէկուն։ Մարդիկը ինծի նկարագրեցին այն սարսափը որ կ'զգան «Վըրանները վա՛ր» հրամանէն որ շարունակ կը կրկնուի և որուն հետեւէն խարազանը կուգայ։

«Ո՛հ, կ'ուզէի որ տեսած ըլլայիք թէ ինչ՝ նողկալի անգթութեամբ կը վարուին և ինչ սատանայական հնարամտութիւն ի գործ կը դնեն մարդոց ամբողջ դրամը կորզելու համար՝ անոնց մահուընէն առաջ։ Չէ ապահովապէս մահն է այս բոլոր տարագրուողներուն միակ վախճանը, եթէ այս ամենուն վերջ մը դնելու միջոց մը չի գտնուի։

«Հոս պէտք է աւելցնեմ Գ.էն հասած տեղեկագիր մը։ Երկու երեք շաբաթ առաջ՝ Հայերուն գլխաւորներէն 200 հոգիի չափ բանտարկեցին, յետոյ գիշերով 30-40 ական հոգինոց խումբերով զանոնք վակոններու մէջ լեցուցին, գետեզերքը տարին և սպաննեցին։ Անոնց մէջն էին տասնեւութ երկաթուղիի պաշտօնեաներ և դրամատան տնօրէնը։

«Անցեալ շաբթուան միջոցին, բոլոր Հայ այրերը՝ լուսաւորչակա՛ն, բողոքական թէ կաթոլիկ՝ ձերբակալուեցան, մինչեւ շապիկ-վարտիքը մերկացուեցան, իրարու կապուեցան և տարուեցան, ու ո՛չ ոք մէկ մ'ալ տեղեկութիւն ունեցաւ անոնց մասին։ Կիները և աղջիկները Թուրք գիւղերը բաշխուեցան. Թուրքերը կուգային, աղջիկները աչքէ կ'անցընէին և ուզածնին կ'ընտրէին կը տանէին։

«Այսօր համրեցի 21 կիներ և երեխաներ ապաման սրահի մը մէջ, որոնցմէ շատերը բոլորովին հալ ու մաշ վիճակի մէջ գետինը ընկողմանած էին. տղայ մը մահամերձ էր, երկու ուրիշներ անկէ քիչ պակաս, և խումբին մնացած կէսը նոյնպէս մէկ քանի օրէն անշուշտ պիտի մեռնէր եթէ շարունակէր մնալ այնտեղ ուր զիրենք բանակեցուցած էին։ Գիւղացիներէն շատերը լեռնցիներ էին, որոնք ցերեկը հրատոչոր փոշոտ դաշտին մէջ և գիշերը բացօթեայ ցուրտին ենթարկուած մնալով՝ շուտով մեռնելու դատապարտուած էին։

«Այս մարդիկը դիտմամբ դանդաղ մահուան մը կ'ենթարկեն, որպէսզի իրենց հարստահարիչները՝ անոնց մեռնելէն առաջ առիթ ունենան անոնց կիներէն և գոյքերէն իրենց ցանկացածները ընտրել տանելու և անոնց դրամները կորզելու։

«Տօքթ. և Տիկին Ա. 94ի և 96ի կոտորածները տեսած են, ինչպէս որ ես և օրիորդ Պ. ալ աւելի վերջը՝ երկու յեղափոխութեան, մէկ կոտորածի և երկու պատերազմներու ականատես եղած ենք. բայց ամենքս ալ համաձայն ենք որ երբեք այսպիսի բան մը տեսած չէինք։

Ընդվզեցուցիչ պարագայ մ'ալ այն է որ՝ այս կիներէն և տղաքներէն շատերուն հայրերը և եղբայրները բանակին մէջ երկրին համար կը կռուին. այս պարագային մէջ կը գտնուէր կիսամեռ տղայ մը որ այս երեկոյ մեր դարմանատունը բերուեցաւ, և ուրիշ տղայ մ'ալ որ հաւանօրէն շուտով նոյն բաղդին պիտի արժանանայ»։

(Թայմզ, 15 Դեկտ.)

Յովհ. Խան Մասեհեանի, Պերլինի պարսկական դեսպանին, հրաժարեցուցման և իր տեղ պարսիկ Հիւսէյին Խանի դեսպան անուանման լուրը ասկէ առաջ հաղորդած էինք։ Ռուսական թերթ մը այժմ կ'իմացնէ թէ սոյն փոփոխութիւնը կատարուած է Վիլհէլմ կայսեր պահանջմամբ, որովհետեւ Մասեհեան Խան ստորագրած էր Պերլինի Հայ գաղութին խնդրագրին ներքեւ, որ կը վերաբերէր Թուրքերու կողմէ Հայաստանի մէջ գործուած գազանութիւններուն։ Պերլինի Թուրք դեսպանը բողոքած է Վիլհէլմին և այս պատճառաւ Քայզերը պահանջած է որ Մասեհեան Խան ետ կանչուի։

Պ. Եփրեմ Եփրեմեան, որ Ֆրանս. բանակին մէջ կը ծառայէր իբրեւ կամաւոր և տասնապետի աստիճան ունէր, Մարսէյլէն կը գրէ մեզ. «Երբ Թէնէտոս էինք, Ֆրանս. զինուորներուն մեծ մասը Սելանիկ ղրկեցին. այլեւս մեզի գործ չկար. մեզի առաջարկեցին կա՛մ Լէժիոն էթրանժէրի մէջ մտնել՝ հինգ տարի մնալու պայմանաւ, կա՛մ մեզի ազատ ձգել, «Եթէ Ֆրանս. բանակին մէջ ղրկէք՝ կ'երթանք» ըսինք. չուզեցին ղրկել. այդ պատճառաւ ազատ ձգեցին. հիմա եկանք հոս, վաղը միւս օր գործի պիտի սկսինք»։

Պուրս Էժիբսիէնի Աղեքսանդրիոյ թղթակցութիւնը իր ծնունդի թիւին մէջ հրատարակեց մեր աշխատակից Նաւային սպայ Տիրան Թէքէեանի հետեւեալ երկու գրութիւնները. «Ծովաթաղումը» և «Հայ Տղան», առնուած Սուէտիոյ դիւցազներգութիւնէն։ Մեր ընթերցողները կը յիշեն անշուշտ՝ թէ վերոյիշեալ երկու յուզիչ էջերը ասկէ առաջ թարգմանովի լոյս տեսած են «Արեւ»ի մէջ։

Կովկասի մէջ սղութիւնը սկսած է մտահոգիչ համեմատութիւններ ստանալ՝ թէ՛ տեղացւոց և թէ մանաւանդ գաղթականներուն համար։ Կովկասեան բոլոր նահանգապետներու և վարչապետներու մասնակցութեամբ Թիֆլիսի մէջ տեղի ունեցած «Առանձին խորհրդակցութեան» վերջերս նիստին՝ բնակարանային և փոխադրութեանց խնդիրներու յատուկ Յանձնախումբերուն որոշումները ընդունուած և յետոյ երկարօրէն քննըւած են Պարենաւորման Յանձնախումբին ցանկութիւնները։ Յաջորդ և վերջին նիստին, նոյ. 16[31, բոլոր եզրակացութիւնները ընդունելով յանձնըւած են Փոխարքային։ Փակման պահուն՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսեան Ն. Կ. Բ. Մեծ-իշխան Փոխարքային ուղղած է հետեւեալ ճառը.

«Ձերդ Կայսերական Բարձրութիւն. Կովկասեան բոլոր քաղաքային ինքնավարութիւնների, հասարակական կազմակերպութիւնների և հաստատութիւնների անունից, որոնք Ձեր հզօր և ազնիւ խօսքով կանչված են մասնակցելու Առանձին Խորհրդակցութեանը, մենք միահամուռ երախտագիտութիւն ենք արտայայտում Ձեր բարձր վստահութեան համար, որ ցոյց տուիք մեզ։ Մենք այստեղ բերինք մեր բոլոր գիտութիւնը և փորձառութիւնը, որ ձեռք ենք բերել երկար աշխատանքով, և մեր զբաղմունքների և որոշումների մէջ դրինք մեր ամբողջ հոգին ու սիրտը։ Ձերդ Կայսերական Բարձրութեան իմաստուն և սրտագին ղեկավարութեան տակ բոլոր այստեղ կատարուածը պէտք է ոսկէ տառերով անջնջելի կերպով գրվի Կովկասի և մեր Մեծ Հայրենիքի քաղաքային ինքնավարութիւնների պատմութեան մէջ։ Մենք խօսք ենք տալիս՝ առանց կանգ առնելու շարունակել մեր աշխատանքը և մեր տան մէջ, այն հաստատ հաւատքով որ այս բարձր տեղում մեզ ցոյց տրված վստահութիւնը լիակատար արտայայտութիւն կը գտնի և տեղական ինքնավարութեան մօտ, և մենք, զինված անհրաժեշտ միջոցներով ու լիազօրութիւններով, կարող կը լինենք մեր համեստ ոյժերի չափ արդարացնել Ձեր բարձրարժէք վստահութիւնը։ Մենք խոնարհվում ենք Թագաւորի խորոյարգ Փոխարքայի առաջ և Մեծ Հայրենական պատերազմի Հերոսին աղաղակում հզօր «ուրան»։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՇՔԵՂ ԵՐԵԿՈՅԹ

Վաղը Շբ., 1 Յուն., երեկոյեան ժամը 9ին, Գահիրէի Ս. Դ. Հնչ. ընթերցարանին մէջ տեղի պիտի ունենայ ընտանեկան շքեղ երեկոյթ մը, նոր յայտագրով։ Մուտք 5 դրշ. ողջ քօնսոմասիոնով։ Տոմսերը կը ծախուին Գրիֆթալ Պար և Խան Խալիլ Տեար Թերզիպաշի քով։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ. — Շ. Մ. Ի. Հաճեցէք ինքզինքնիդ ճանչցնել՝ Ձեր գրութիւնը կարենալ հրատարակելու համար։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԵՐ

Պալքաններու մէջ

Լոնտոն, 28.— Երեք աւստր. զօրաբաժիններ որոնք Սերպերուն կողմէ խիստ պարտութիւն մը կրած էին, Ալպանիա ղըրկուեցան։ Ռ.

Լոնտոն, 30.— Զօր. Հինտէնպուրկ Պալքանները մեկնեցաւ՝ զինուորական գործողութեանց մասին Սպայակոյտին հետ համաձայնելու համար։

Լոնտոն, 28.— Հարաւային Սերպիոյ վրայ կատարուած օդային խուզարկութիւններ կը հաստատեն թէ այս կողմէն Գերմանացւոց յարձակում գործելու մասին ոչ մէկ նշան կ'երեւայ։

Հռոմ, 29.— Ռուս. հետեւակազօրայ և հրետանիի զօրաւոր զօրասիւներ Պեսարապիոյ մէջէն կը յառաջանան։

Լոնտոն, 28.— Հռոմէն ստացուած լուրեր կը ծանուցանեն թէ Ռուսերուն Պալքանեան պատերազմին մասնակցիլը Պուքրէշի և Հռոմի կառավարութեանց միջեւ տեղի ունեցող բանակցութիւններէն կախում ունի։ Մօք.

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Լոնտոն, 28.— Մինչեւ հիմա 60 Պուլկար զինուորներ հրացանի բռնուած են ռուսասէր զգացումներ արտայայտած ըլլալնուն համար։

—Պուլկար պաշտ. լրագիրը կը հրատարակէ ցուցակը Ռուսիոյ դէմ կռուիլ չ'ուզող պուլկար սպաներուն, որոնք իբր դասալիք նկատուած են։ Անոնց մէջ կը գտնուին երեք զօրաբաժինի հրամանատարներ, 5 Մայօրներ, 13 հարիւրապետներ և 22 տեղակալներ։

Լոնտոն, 28.— Հռոմէն կը ծանուցանեն թէ ռուսական նաւատորմը անցեալ ուրբաթ օր դարձեալ ռմբակոծած է Վառնան և Պուլկար Թորփիլանաւակ մը ընկղմած է։ Կը կարծուի թէ այս նաւատորմիղը նոյնպէս ընկղմած է նաւահանգստին մէջ գտնուող ընդծովեայ մը։

ԳԱՐԱՏԱՂ

Լոնտոն, 29.— Գարատաղեան զեկոյց մը կը ծանուցանէ թէ աւստր. ուժեր և նաւատորմը Լովչէն լերան մօտ ռմբակոծեցին Գարատաղեան դիրքերը։ Անոնք Գարատաղցիներուն դէմ 15 ժամ անդադար կրակ բացին, միեւնոյն առեն հրետանիի վճռական յարձակումներ գործելով, բայց ամենքն ալ ետ մղուեցան։ Գարատաղցիները երկու մեռեալ և երկու վիրաւոր ունեցան։ Ամսոյն 23ին Լէքանայի ճակատամարտի ընթացքին աւստրիացիք 200 հոգի կորսնցուցին։ Թագաւորը շնորհաւորեց զինուորները իրենց տարած յաղթանակին համար։ Ռ.

Թուրքիոյ մէջ

Լոնտոն, 30.— Գերման ոստիկաններ իրենց յատուկ համազգեստով օսմ. մայրաքաղաքին մէջ ոստիկանի պաշտօն կը կատարեն։ Մօք.

Իտալական լրագիրները կը ծանուցանեն թէ Զօր. Մաքէնզըն Պոլիս հասած է Թալաթ պէյը Էնվէր փաշայի հետ հաշտեցնել փորձելու համար։

Թուրքիոյ ներքին գործոց փոխ-նախարար, նախկին Պէյրութի կուսակալ Ալի Միւնիֆ պէյ Լիբանանի կառավարիչ անուանուած է։

ՄԻՋԱԳԵՏՔԻ ՄԷՋ

Լոնտոն, 29.— (Պաշտ.) Զօր. Թաունզէնտ կը ծանուցանէ թէ Ծննդեան օրէն ի վեր Թրքական յարձակումը և ռմբակոծութիւնը բոլորովին դադրած է։

Արեւելեան ճակատին

Լոնտոն 28.— Պարաններու խզման պատճառաւ Ռուսիայէն ուշացած հեռագիրներ ցոյց կուտան թէ բազմաթիւ տարիներէ ի վեր այսքան խիստ ձմեռ զգացուած չէր Ռուս. ճակատին վրայ, ցուրտը զերօէն վար 45 աստիճան է։ Տըվինայի վրայ օր ցերեկով գայլեր ընտանի կենդանիներու և գիւղացիներուն վրայ կը յարձակին։ Ռ.

Ժընեւ, 29.— Աւստր. ղեկավար օդապարիկ մը որ ռուս. դիրքերուն վրայ հետազօտութիւններ կը կատարէր, մեքենայի խանգարումի մը հետեւանօք ստիպուեցաւ ճամբան փոխել և ռուսական հողը իջնալ։ Մէջը գտնուողները արգելափակուեցան։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Թէհրան, 27.— Ռուսերը Քէշանը գրաւեցին և հիմա Իսֆահանի վրայ կը յառաջանան։ Ռ.

Արեւմտեան ճակատին

Լոնտոն, 28.— Գերման զեկոյց մը կ'ըսէ թէ Վօժի մէջ ֆրանսական յառաջխաղացումը կարեւոր արդիւնք մը չպիտի ունենայ։ Մօք.

Լոնտոն, 29.— Զօր. Տուկլաս Հայկ հետեւեալը կը հաղորդէ. «Երէկ թշնամին ապարդիւն կերպով յարձակեցաւ մեր օդանաւարաններէն մէկուն վրայ։ Զորս գործիքներէն մէկը միայն իր նպատակին հասաւ, բայց ոչ մէկ վնաս պատճառեց։ Մեր գործիքներէն մէկը գետին ինկաւ։ Երէկ իրիկուան ընթացքին Արմանթիէռի մօտ յաջող գործողութիւն մը կատարուեցաւ. Թշնամի խրամներուն մէջ խուժեցինք ռումբեր նետելով որոնք խիստ արդիւնաւոր եղան։ Թշնամւոյն բազմաթիւ կորուստներ պատճառեցինք։ Մեր կորուստները թեթեւ եղան»։ Ռ.

Լոնտոն, 29.— «Մօրնինկ Բօսթ» և «Տէյլի Քրօնիքլ» կը յայտարարեն թէ երէկի գումարուած դահլիճի նիստին մէջ Պ. Ասքուիթ իր ընկերակիցներուն ըսած է թէ պարտաւորիչ միջոց մը ձեռք առնել որոշուած է դեռ չզինուորագրուած ամուրիներուն հանդէպ։ Ռ.

Լոնտոն, 30.— Նախարարաց խորհուրդը բոլոր ամուրիներուն պարտաւորիչ ծառայութիւն որոշեց։ Օրինագիծը յունվ. 4ին Երեսփ. Ժողովին պիտի ենթարկուի։ Մօք.

Լոնտոն, 27.— Բրիտ. «Հէտլէյ» շոգենաւը ընկղմուեցաւ։ Նաւազախումբը ազատուեցաւ։ Ռ.

Բարիզ, 29.— Ծերակոյտին մէջ 1917ի դասու զինուորներուն զէնքի տակ առնուելու օրինագծին քուէարկութեան առեն պատ. նախ. զօր. Կալիէնի հետեւեալը յայտարարեց. «Ֆրանսան որ 18 ամիս առաջ խաղաղութեան փափաքող էր այսօր իր բոլոր կամքով պատերազմին շարունակութիւնը կ'ուզէ։ Այն որ այժմ «Հաշտութիւն» բառը կ'արտասանէ գէշ քաղաքացի մը պէտք է նկատուի։ Մեծ կռիւը այն օրը պիտի վերջանայ երբ Ֆրանսա իր դաշնակիցներուն հետ պիտի ըսէ «Կը քաշուիմ. փափաքածս ստացած ըլլալով՝ հանդարտ աշխատութեանս կը վերսկսիմ»։ Պ. Ժէուլէ՝ օրինագծին տեղեկաբերը՝ յայտարարեց թէ բանակին յանձնաժողովը գործօն ուժերու հարցը քննելով հաստատեց թէ ոչ մէկ պատճառ կայ մտահոգութեան։ Ֆրանսա բաւարար քանակութեամբ զինուոր ունի պատերազմը մինչեւ վերջ շարունակելու համար։

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Նիւ-Եորք, 28.— Նախագահ Վիլսընի մասնաւոր գործակալը՝ գնդապետ Հաուզ, որ զանազան դեսպաններու հրահանգներ տանելու պաշտօն ունի, այսօր մեկնեցաւ։ Քարիթէն Պօյ Էտ միեւնոյն շոգենաւով մեկնեցաւ. Բրիտ. իշխանութեանց կողմէ տրուած ապահովագրով մը։ Ընթերվիու մը մէջ Պօյ Էտ անպատասխանատու մամուլի մը անմիտ արտայայտութիւնները դատապարտեց։

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Պալքաններու մէջ

ՆԱԽԱՄԱՐՏ

Բարիզ, 30.— Զեկոյց մը կ'իմացնէ թէ Աւստրիացիք Տիւրացցոյի վրայ նոր արշաւանք մը փորձած են, որ այս անգամ իրենց համար աղէտ մը եղած է։ Նաւախումբ մը Քաթթարոյէն յառաջացաւ Տիւրացցօն ռմբակոծելու նպատակաւ. Դաշնակից տորփիղները սկսան կռուիլ. «Լիէժօ» նոր տիպարով աւստր. թորփիլանաւակը ականի մը զարնուելով ջրասոյզ եղաւ, իսկ «Թրիկլավ»ը Դաշնակիցներուն կողմէ ընկղմուեցաւ։ Մնացեալ նաւերը Դաշնակիցներէն հետապնդուելով փախուստ տուին։ Ռ.

Աթէնք, 30.— Ռուս. նաւատորմը Եօքսինօսի մէջ Պուլկարիոյ Թերսինանոս քաղաքին դղեակը ռմբակոծեց։ Հէլ.

ԻՏԱԼԱՑԻՔ ԱԼԲԱՆԻՈՅ ՄԷՋ

Հռոմ, 30.— Ալպանիոյ բոլոր նաւահանգիստներուն մէջ գտնուող գերման. եւ աւստր. հիւպատոսները իտալ. զինուորական իշխանութեանց կողմէ վտարուեցան. Մսն.

Արեւելեան ճակատին

Լոնտոն, 30.— Տնիէսթրի վրայ եւ Պեսարապիոյ մէջ յուսահատ կռիւներ տեղի ունեցան։ Աւս. պաշտ. զեկոյց մը կ'ընդունի թէ Կալիսիոյ մէջ Աւստրիացիք պարտաւորուած են նահանջել գերազանց թուով ռուս. ուժերու առջեւ։ Մօք.

Պեթրոկրատ, 29.— Ժոռժ Միխայելովիչ մեծ դուքսը Ճափօնի կայսեր բարգաւաճութեան առթիւ Ցարին շնորհաւորութիւնները ներկայացնելու համար Թօքիօ մեկնեցաւ։

ՔԱՅԶԷՐԸ ՀԻՒԱՆԴ

Լոնտոն, 30.— Պէրլինէն կէս-պաշտ. հեռագիր մը կը հաստատէ թէ Քայզէրը պալարէ մը (ուռ) կը տառապի, բայց կ'ըսուի թէ վտանգաւոր չէ։ Հեռագիրը կ'աւելցնէ թէ Քայզէրը սենեակը մնալ պարտաւորուած է։ Ռ.

Բրէսի Ֆօնսիէի դեկտ. 15ի վիճակահանութեան շահող թիւերը տեսնել Դ. էջ։ Յետ այսու մեր բաժանորդներէն փափաքողներուն պիտի ղրկենք առանձին ցուցակը՝ իր օրին՝ թերթին մէջ դրուած։ Ըստ այնմ պէտք ունեցողները թող հաճին կանխաւ իմացնել։

ՍԱԿԱՐԱՆ

31 Դեկտեմբեր 1915

ԲԱՄԲԱԿ	Բացում		Փակում	
Յունվար	19	3]32	19	1]8
Մարտ	19	15]32	19	9]16
Նոյ.(1916)	19		19	3]32

ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՆՏ
Դեկտ.-Յունվ.
(2 ամիս) 115 20]40 116

ԱՐԺԵԹՈՒՂԹ			
Գրէտի Ֆօնսիէ	1886	Ֆր.	307.50
» »	1903	»	237.—
» »	1911	»	248.—
Բումելի Երկաթուղի		»	124.—
Բանամա		»	92.—

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ Տպարան
Մ. ՏԱՄԱՏԵԱՆ
Imp. Economique, Alex.

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲՐԷՏԻ ՖՕՆՍԻԷ
15 Դեկտ. 1915ի վիճակահանութիւնը

1886ի պարտաթուղթեր

Ա. ՊԱՐԳԵՒ, Ֆր. 50,000 Թիւ 125,478

Հետեւեալ 25 թիւերը կը շահին 1000ական Ֆր.

19359	51655	98793	169873	282937
24963	57698	115435	197080	328439
25768	59357	139994	222491	331424
32951	75680	149993	233569	344216
47052	94225	168514	256805	344458

1903ի պարտաթուղթեր

Ա. ՊԱՐԳԵՒ, Ֆր. 50,000 Թիւ 558,777

Հետեւեալ 25 թիւերը կը շահին 1000ական Ֆր.

401261	479751	542395	628686	681406
415058	484465	566770	658942	690218
424176	490883	603699	663022	693893
434640	495656	618563	668418	703219
473847	530763	622924	676957	727887

1911ի պարտաթուղթեր

Ա. ՊԱՐԳԵՒ, Ֆր. 50,000 Թիւ 95,518
Ֆր. 10,000 Թիւ 332,847

Հետեւեալ 24 թիւերը կը շահին 1000ական Ֆր.

6870	61860	158429	240470	305679
14568	66450	172209	247048	336398
48218	78736	215866	254125	381987
49220	101280	224137	254437	399155
58029	142704	233806	302637	